

ԵԶՆԻԿ ԿՈՂԱՍՑՈՒ ՀԱՄԱՐԱՐԱՐԱՌԸ

ԱՆԴՐԱՆԻԿ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ

Համաբարբառները լեզվաբանների, գրականագետների, պատմաբանների և ընդհանրապես բանասիրությանը զբաղվողների համար առաջին անհրաժեշտության գրականություն են: Դրանցով միայն հնարավոր է ստուգել, թե որևէ բառ ինչ հաճախականությամբ է օգտագործվել, ինչ իմաստներ է արտահայտել, քերականական ինչ կիրառություն է ունեցել և այլն: Համաբարբառների միջոցով կարելի է լուծել այն հարցը, թե որևէ երկում ինչ աղբյուրներ են օգտագործվել կամ այդ երկը որ գրքի համար աղբյուր է ծառայել: Կիրառության ոլորտի ամենեկին էլ ոչ լրիվ այս թվարկումը ցույց է տալիս, թե որքան կարևոր ու անհրաժեշտ են համաբարբառները, այն էլ գիտության զարգացման այս դարաշրջանում, երբ ձգտում կա դեպի ճշգրտությունն ու կատարելությունը, սպառնալիցն ու համապարփակը: Եվ եթե լեզվաբանական, գրականագիտական, պատմագիտական որևէ երևույթ մինչև վերջ բացահայտելու համար փաստեր են պակասել, ապա դրա պատճառներից մեկը եղել է համապատասխան համաբարբառների բացակայությունը:

Մեկ տասնամյակ առաջ սկսվեցին Հայկական համաբարբառ կազմելու աշխատանքները: Կազմվեց այն հեղինակների ցանկը, որոնց երկերի համաբարբառները պիտի ստեղծվեին, մշակվեցին համաբարբառների կազմության սկզբունքները: Եվ ահա մեր սեղանին են Հայկական ՍՍՀ ԳԱ հայկական քարտարանի մականիշն ունեցող «Հայկական համաբարբառ»-ի մի տասնյակի հասնող հատորները:

Մեր հնարավորություններից ու նպատակներից դուրս է լույս տեսած բոլոր համաբարբառների մասին հանգամանալից խոսելը: Կքնենք միայն Եզնիկ Կողբացու Համաբարբառը, նրանում կիրառված սկզբունքները, նրա արժանիքներն ու թերությունները: Այն համոզմունքին ենք, որ սույն քննությունը ինչ-որ չափով կնպաստի հետագա հատորները գիտական առավել բարձր մակարդակով կազմելու գործին:

Եզնիկ Կողբացին իր երկով ու լեզվով ուրույն հեղինակներից մեկն է: Նրա մասին ստեղծվել ու ստեղծվում է հայ և օտարալեզու գիտական հարուստ գրականություն: Եվ ուրախալի է, որ առաջին համաբարբառը նվիրված է նրան: Եզնիկ Կողբացու Համաբարբառը կազմող Ժ. Թոսունյանը, լավագույնս ըմբռնելով դա, գործին մոտեցել է բարեխղճությամբ ու բանիմացությամբ, երկի ստեղծման ժամանակի լեզվի քաջիմացությամբ, բանասիրական համակողմանի գիտելիքներով ու ունակություններով: Առանց այդ արժանիքների Ժ. Թոսունյանը դժվար թե կարողանար հաղթահարել բազմաթիվ այն դժվարությունները, որոնք ծագում են համաբարբառ կազմելիս:

Ակադ. Ա. Ղարիբյանը, կազմող Ժ. Թոսունյանը և խմբագիր, պրոֆ. Ա. Աբրահամյանը ընտրել են թեկուզ և՛ դժվարին, բայց և ավելի ճիշտ ուղի.

Համարաբառում ներկայացված են ոչ միայն նյութական խոսքի մասերը. այլ անխտիր բոլոր բառերը: Ընդ որում, նախդիրները տրված են տարբեր հոլովների հետ: Այս իմաստով բնագրային սույն համարաբառը մասամբ կատարում է նաև քերականական համարաբառի դեր:

Չնայած հայ բանասիրության մեջ կան լուրջ ու ծանրակշիռ կասկածներ, որ «Եղև աղանդոց»-ին կցված «հրատք»-ը Եղևիկ Կողբացու գրչին է պատկանում, այնուամենայնիվ ճիշտ պիտի համարել «հրատք»-ին վերաբերող բառերը Համարաբառում ընդգրկելը: Չէ՞ որ եթե ապացուցվի կամ ժխտվի այդ երկու երկերը մեկ հեղինակի պատկանելու հարցը, ապա միայն համարություն այս ուղիով կապացուցվի կամ կժխտվի այդ: Այլ բան, որ կազմողը որևէ եղանակով (ասենք «հրատք»-ին վերաբերող նախադասություն-օրինակներից հետո և, այսինքն հրատք, ավելացնելով) պետք է հուշեր տվյալ բառի աղբյուրը:

Ժ. Թոսունյանը առաջարկում է Եղևիկ Կողբացու երկի հրատարակություններում սպրդած մի քանի սխալ բառերի սրբագրություններ, երբեմն նկատի առնում նաև ուրիշների կատարած սրբագրությունները, որպեսզի Եղևիկ Կողբացու երկը ուսումնասիրողին ներկայանա հնարավորին չափ անսխալ տեսքով:

Եղևիկ Կողբացու օգտագործած բառերը բերված են ըստ իրենց սկզբնատառերի այբբենական դասավորության, իսկ վկայություն-նախադասությունները տրված են տպագիր գրքի էջերում գրված իրենց հերթականությամբ:

Ա. Ինչևի՜նչ պատճառներով Եղևիկ Կողբացու Համարաբառում իսպառ բացակայում են «Եղև աղանդոց»-ում օգտագործված յոթ բառերը: Սա Համարաբառաւի ամենամեծ թերությունն է: Որո՞նք են առանձին բառահոլովածով չներկայացած բառերը.

1. Անեղեղ. «Անեղեղ լիցիս ի մահաբեր նետից սատանայի» (299)¹.

2. Ժամանեցուցանել. «Ի գիտութիւն իւրոյ անարար էութեանն ժամանեցուցանել» (7).

3. Լուրջ. «Յորժամ ի Լուրջաց ծուլայցէ» (177՝ չնայած ցույց է տրված ի Լուրջաց բառահոլոված).

4. Պատիւ բառն իր հինգ նախադասություններով. ա. «Զպատիւ արարչին ոք նոցա մատուցանիցէ» (16), բ. «Ածի ի պատիւ զանարժանն» (166), գ. «Այլ զի մի պատուօք ինքնակացութեան տգիտաց կարծիցին» (194), դ. «Յարարածոցն մեկնեալ էր զպատիւ արարչին» (208), ե. «Զպատիւ փառաւորութեանն մի անձին առնել խորհիցէ» (233).

5. Պատկեր բառն իր վեց նախադասություններով. ա. «Եթէ պատկեր ոք գործիցէ» (39), բ. «Միայն մարդ ըստ պատկերի եւ ըստ նմանութեան Աստուծոյ եղիւ» (45), գ. «Հաստատեաց Աստուած զմարդն յանեղծութիւն պատկերի իւրոյ մշտնջենաւորութեանն» (75), դ. «Զոր ըստ իւրում պատկերին արար» (93), ե. «Կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ» (170), գ. «Զպատկերն երանգօք ի նկարու հանէին» (206).

6. Պատկերանալ. «Նախ քան զպատկերանալն եւ լինել կենդանի» (31).

7. Սեպնականել. «Իւր միայնոյ սեպնականել զկենդանութիւնն» (8):

¹ Մենք նույնպես տալիս ենք Եղևիկ Կողբացու 1826 թ. հրատարակության էջահամարները:

Որոշ բառերի խոսքի մասային պատկանելությունը ճիշտ չորոշելու պատճառով կան պառնձին բառահոգեվածով շնորհյալացված մի քանի բառեր ևս, որոնց կանգնողականք ստորև (է կետ)։

Բ. Աշխատության երկրորդ հիմնական թերությունն այն է, որ թեև նշված են Եզնիկ Կողրացու օգտագործած բառերը առանձին բառահոգեվածներով, սակայն այդ բառերի կիրառությունները թերի են ներկայացված։ Այսպես. «Անցուցանել» բայը Եզնիկ Կողրացուն ոչ թե մեկ անգամ է օգտագործել (ինչպես ցույց է տրված Համաբարբառում), այլ երկու անգամ։ Ահա շնորհյալացվածը. «Մեծաշան վաստակօք անցուցանէ զհւր զկեանսն» (310)։ Գին բառահոգեվածում պակասում են «Արեանն Յեսուայ հմք զինք» (265), զոյ ճնարում՝ «Զի թէ իշանելոյ ինչ ճնար զոյր» (218), իսկ խաչ բառահոգեվածում՝ «Կերպարանօքն ասեն զխաչն եւ զմահն» (265) նախադասությունները։ «Մովացուլ» բառը Եզնիկ Կողրացու կողմից օգտագործվել է ոչ թե երկու, այլ երեք անգամ։ Մոռացված է «Ի մերում գեւղ ծովացուլ զկով գործեաց» (99) նախադասությունը։ Պատել բառահոգեվածում չկա «Պատի առ հիւսիսեալ» (189) նախադասությունը։ Պատիժ բառահոգեվածում ցույց է տրված 10 նախադասություն, այնինչ Եզնիկ Կողրացին այդ բառով 19 նախադասություն ունի։ Համաբարբառում բացակայում են. ա. «Յիրաւի կրեն պատիժս» (51), բ. «Կրէ պատիժ պատուհասից» (58). թեև վերջին երկու օրինակները կան «Կրել պատիժ» բառահոգեվածում), գ. «Պատիժք (դնիցին) ի դատաւորաց» (59), դ. «Եւ ոչ (պարտի) իշխանն պատիժս ի վերայ շարագործին ածել» (59), ե. «Եւ ոչ պատիժս ի վերայ հասուցանել» (59), զ. «Նա եւ ոչ պատժոց արժանի էր» (153), է. «Եւ դարձեալ տանջանս եւ պատիժս շնչոցն յանդուցելոց դնեն» (210), ը. «Ոմանք (կայցեն) ի պատիժս դատաստանի» (296), թ. «Մի զկայենին ժառանգեսցես զպատիժն» (303)։

Համաբարբառից դուրս են մնացել «պատճառ» բառը պարունակող հետևյալ հինգ նախադասությունները. ա. «Պարտ իցէ նմա պատճառ կարծել» (6), բ. «Ինքն է պատճառ ամենայնի» (7), գ. «Զանձնիշխանութիւնն արար պատճառ» (9), դ. «Մի էութիւն մշտնջենաւորական է եւ պատճառ ամենեցուն լինելոյ» (12), ե. «Զմեք բաւական մերձեալ յամենեցունց պատճառն» (12)։

Երկրորդ, երրորդ, իմաստուն, խրատ, կատարել, կրօն, ճեթանոս, Մարկիոն, չորրորդ, պարսք, քէշ բառահոգեվածներում պակասում են այդ բառերով օգտագործված մեկական, իսկ վարդապետ բառահոգեվածում՝ երկու նախադասություն, որովհետև զանց են առնված «Եղծ աղանդոց» երկի շորս գրքերի և «Խրատք»-ի խորագրերը։

Գ. Աշխատության մեջ որպես բառահոգեված են բերվում և՛ որևէ բառ, և՛ այդ բառով կազմված բառակապակցություն, որ մեկ ընդհանուր իմաստ է արտահայտում, և՛ այդ բառով կազմված հարադիր բայեր։ Այս հարցում որոշակի սկզբունք ու մեթոդ վերջնականապես մշակված չլինելու պատճառով ստացվել է անհարկի զուգահեռություն։ Այսպես. ունենք ազդեցութիւն և ազդեցութիւն բնական, ազդումն և ազդումն բնական, աման և աման ցանկութեան. բան և բանն Աստուած, բանն տէրունական, բնական և բնական ազդեցութիւն, դաշտ և դաշտ էլմնայ, դեղ և դեղ մանու, ձոր և ձոր Գաբաուեի, շունչ և շունչ կենդանի, պարգ և պարգ բնութիւն, պարգական և պարգական բնութիւն, սուրբ և սուրբ Աստուած, տաքածամ և տաքածամ մանք, տէր և տէր ամենայնի, տէր Աստուած, տէր Յիսուս զուգահեռ բառահոգեվածները, որոնցից երկրորդ-

ները անպայմանորեն արտահայտված են առաջին բառերի բառահոգվածներում: Նույն հետևողականությամբ բերված են Աստուած և Աստուած օրինաց, Աստուած բարձրեալ, Աստուած բարոյ եւ օտարի, Աստուածատուր և Աստուածատուր գիրք, աստուածեղէն և աստուածեղէն գիրք, երկրորդ և երկրորդ անգամ, չորեքին և չորեքին բնութիւնք, չորեքին հիւթք, չորք և չորք բնութիւնք, չորք հիւթք, չորք տարերք, տիւ և տիւ եւ գիշեր, տոհմական և տոհմական արղեանց, փորձ և փորձ իրաց բառահոգվածները:

Այս նույն սկզբունքը կիրառվել է նաև հարադիր բայերի դեպքում, այսինքն բերված է որևէ բառ, այդ բառով կազմված հարադիր բայը և վերջինիս միայն բայական մասը: «Յաշտ» բառը Եղեկ Կողբացու մոտ օգտագործվել է 35 անգամ, ընդ որում «Առնել» բայի հետ հարադրվել է 30 անգամ: Հետևապես, «Յաշտ» բառն ունեցող նախադասությունները յաշտ բառահոգվածում 35 անգամ բերվելուց հետո (սա պարտադիր էր) 30 անգամ էլ բերված է յաշտ առնել բառահոգվածում: «Բաւական» բառը պարունակող 19 նախադասություններ բաւական բառահոգվածում արտահայտվելուց բացի, նույնությամբ (17 անգամ) կրկնվել են բաւական եմ և բաւական լինել բառահոգվածներում: «Լուսատու» բառն օգտագործված է 4 անգամ, ընդ որում բոլորն էլ «Լինել» բայի հետ, հետևաբար շորսական անգամ կրկնված են այդ բառերը պարունակող նախադասությունները լուսատու և լուսատու լինել բառահոգվածներում: Նույնը վերաբերում է «Խելամուտ» և «Խելամուտ լինել» (երկուական անգամ) բառերին: «Խեղդ» բառն օգտագործված է երեք անգամ, այն էլ երեք տարբեր բայերի հարադրությամբ, և կազմողը նպատակահարմար է գտել նույն նախադասությունները կրկնել և՛ խեղդ, և՛ «Խեղդ»-ով կազմված հարադիր բայերով բառահոգվածներում (խեղդ ընդ անձն առնել, խեղդ ընդ անձն արկանել, խեղդ ընդ անձն լինել): «Յառաջադէմ» բառը Եղեկ Կողբացու կողմից օգտագործվել է երկու անգամ, ընդ որում երկու անգամ՝ էլ «Լինել» բայի հետ: Որքանո՞վ էր նպատակահարմար բերել և՛ յառաջադէմ, և՛ յառաջադէմ լինել առանձին բառահոգվածներ (այն էլ իրար անմիջապես հաջորդող)՝ երկու դեպքում էլ ներկայացնելով նույն նախադասությունները: Նույն ձևով վկայություն-նախադասությունները կրկնվել են ազատ և ազատ առնել, ազդ և ազդ առնել, ազդ լինել, անհոգ և անհոգ առնել, կենակից և կենակից լինել, կերպարանակից և կերպարանակից լինել, կոխան և կոխան արկանել, հալածական և հալածական առնել, համար և համարս պահանջել, հետամուտ և հետամուտ լինել, հույս և հույս գալ, յայտ և յայտ առնել, յայտ լինել, յայտնի և յայտնի ստնել, նշան և նշանս տալ, ոգի և ոգի առնուլ, ոգի կլանել, ունել և ունել իշխանութիւն, ունկնդիր և ունկնդիր լինել, սու և ու առնել, ուրախ և ուրախ լինել, չար և չար գործել, պակասել և պակասել ի կենաց, պահանջել և պահանջել պատիծս, պաշտօն և պաշտօն առնուլ, պաշտօն հարկանել, պաշտօն մատուցանել, պաշտօն տանել, պատուէր և պատուէր աւալ, սիւ և սիւ շնչել, սկիզբն և սկիզբն առնուլ, սկիզբն առնուլ լինելոյ, սկիզբն առնուլ կենդանանալոյ, սուտ և սուտ առնել, սպասատուութիւն և սպասատուութիւն հարկանել, վարձ և վարձս առնուլ, վնաս և վնաս առնել, վնաս գործել, վրէժ և վրէժս պահանջել, տարագիր և տարագիր լինել, տեղագերծ և տեղագերծ առնել, փախստական և փախստական գնալ, փաշաման և փաշաման կրել, փող և փող հարկանել, քաղ և քաղ հանել բառահոգվածներում:

Այն, ինչ թույլատրելի ու պարտադիր է բացատրական բառարանների համար, թույլատրելի ու պարտադիր չէ համաբարբառներում: Եղնիկ Կողբացու բառապաշարը անկախ դրանից էլ ըստ ամենայնի վեր կհանվեր, եթե կազմող Ժ. Թոսունյանը չդիմեր աշխատությունը ակամա ուռնացնող այսպիսի միջոցների:

Դիցուք, ճիշտ է տվյալ բառը և այդ բառով կազմված հարադրավոր բայը որպես առանձին բառահոգված բերելու սկզբունքը, սակայն չէ՞ որ կար կրկնություններից խոսսափելու հնար: Մի՞թե ավելի օգտակար չէր լինի յաշտ բառահոգվածից բացի ունենալ նաև յաշտ առնել բառահոգված և կատարվեր համապատասխան հղում՝ Տե՛ս Յաշտ: Այսպես նաև ակն բառահոգվածին զուգահեռ, բայց համապատասխան տեղում կլինեիր յական քթել՝ նույնպիսի «Տե՛ս ակն» նշումով:

Մի պահ ընդունենք, թե համաբարբառ կազմողը պետք է ներկայացնի և՛ հարադրավոր բայերը, և՛ հարադրավոր բառերը (գոնե օրինակները չբերելով և հղում կատարելով համապատասխան բառահոգվածին), ինչպես վարվել է Ժ. Թոսունյանը սե՛ն և ա՛ծել զմտաւ, ա՛ծել ի համբոյս եւ ի քի՛նս, ա՛ծել յերկիւլ եւ ի խրաւ, լինել և լինել աւգել, լինել աւժանի, լինել բաւական, լինել դարձ, լինել մահապարտ, լինել մեղապարտ հարադրությունների դեպքում: Բայց ինչո՞ւ անտեսել այդ պարագային նույն ա՛ծել և լինել բառահոգվածներից մեր քաղած ի զարդ ա՛ծել, ի յարդ ա՛ծել, ի կերպարանս ա՛ծել, ի բարբառ ա՛ծել, ի ֆաղցրութիւն ա՛ծել, յքտելութիւն ա՛ծել, յարեւելս ա՛ծել, ա՛ծել ի գիտութիւն, ա՛ծել ի պատիւ, լինել յումեֆէ, լինել հայր, լինել պատեառ, լինել կենդանի, լինել աստուածք, լինել սկիզբն, լինել վնասակար, լինել թշնամի, լինել բանսաբկու, լինել մտավարժ, լինել ատելի հարադրությունները: Եվ կամ իզուր չէ՞՝ «Տալ»-ով կազմված հարադրավոր բայերը որպես առանձին բառահոգված բերելը: Նախ, որ այդ բայով կազմված հարադրությունները շատ ավելի են, քան բերված են զրախոսվող աշխատության մեջ և, բացի այդ, չէ՞ որ տրված է ամենակարեւորը՝ տալ բառահոգվածը, որտեղից ուսումնասիրողը կարող է քաղել իրեն անհրաժեշտ իմաստները, քերականական ձևերը, բառակապակցությունները:

Ուրույն մոտեցում է ցուցաբերված է բայով կազմված անդեմ բայերի նկատմամբ: Սույն համաբարբառը կազմողը այդ բայերի մեջ բաղադրիչներ չի ուզում նկատել: Բայց չէ՞ որ որքայն էլ անդեմ անգ (անկ) է, աւժան է, իմանալի է, ի պէտս է, լաւ է, հանոյ է, հարկ է, յայտ է, պատշան է, պարտ է բա՝ յաձևերը է բայով հանդես գան, դա հիմք չի կարող տալ կազմողին զանց առնելու անգ (անկ), աւժան, իմանալի, ի պէտս (ավելի ճիշտ՝ պէտք), լաւ, հանոյ, հարկ, յայտ, պատշան, պարտ բառերի գոյությունը, որովհետև բայական կապակցությունները կազմելու համար նախ և առաջ անգ (անկ), աւժան, իմանալի, ի պէտս, լաւ, հանոյ, հարկ, յայտ, պատշան, պարտ բառերը պիտի լինեին և միայն հետո դրանցից կազմված բայական կապակցություններ: Համաբարբառի հեղինակը վերոհիշյալ անդեմ բայերի հետ պիտի վարվեր այնպես, ինչպես վարվել է անճնարին-անճնարին է, գոն-գոն եմ, յայտնի-յայտնի է կապակցությունների դեպքում:

Նույն այս սկզբունքից ելնելով ճիշտ չէ ներկայացնել մեղադիր լինել, շան է, բայց շունենալ մեղադիր, շան առանձին բառահոգվածներ:

Կարևոր է բառն իր տեղում գտնել կարողանալը: Որքան էլ հետազոտողին հրամցվեն Նզնիկ Կողբացու «ի բնէ», «Մեղմով» կամ «Յանգգայ» մակբայները, թերութիւն կ'լինի անգգայ, բուն, մեղմ բառահոգւածներով դրանց շնորհայացնելը: Կարծում ենք, որ ավելի ճիշտ կ'լինեն, եթե ի բնէ, մեղմով, յանգգայ բառահոգւածներում համաբարբառը կազմողը ընթերցողին հղեր անգգայ, բուն, մեղմ բառահոգւածներին (թեկուզ և համամիտ լինենք նախադասութիւնների կրկնութեանը), և այստեղ էլ տրվին համապատասխան օրինակները: Աշխատութեան մեջ, սակայն, կատարվել է հակառակը. անգգայ, բուն և մեղմ բառահոգւածներում բացակայում են «ի բնէ», «Մեղմով», «Յանգգայ» բառերը պարունակող նախադասութիւնները՝ հանգրվանելով ի բնէ, մեղմով և յանգգայ բառահոգւածներում: Բառերը հրամցնելու այս եղանակը խորթ չէ ոչ մեկին: Ժ. Թոսունյանն ինքը այդպես է վարվել «Մին» — «ի ծնէ» բառերի հետ, հետևաբար ճիշտ չէ ակն, ակաստան, ամօթ (վերջինս մասամբ, որովհետև այստեղ «Յամօթ լինել» բառակապակցութեամբ օրինակ բերված է, բայց չկան նույն հարադրութիւնն ունեցող 77-րդ և 78-րդ էջերի օրինակները) բառահոգւածներում շնչել «Յական քթթել», «Յակաստանի» և «Յամօթ լինել» ձևերը: Հեղինակը պարզապես պիտի վարվեր այնպես, ինչպես աղակատանգ-յաղակաաանս ճասանել, ամօթ-ամօթ առնել, աչք-յաչաց վրիպել, ապառնով-յապառնովի կալ, արեւ-յարեւու արկանել և յարեւու ունել-ի հետ: Այդպես էլ անգգայ բառահոգւած չկա: Եվ եթե ուզում ենք իմանալ, թե «անգգայ» բառն օգտագործված է Նզնիկ Կողբացու կողմից, պիտի միայն ենթադրութեամբ առաջնորդվենք և փնտրենք «Յանգգայ» բառը: Մեր ասելիքն այն է, որ հնարավորին չափ պիտի դուրացվեն որևէ բառի արմատը գտնելու ճանապարհները:

Կրկնավոր բառերը ներկայացված են առանձին. ունենք երամ և երամ երամ, կեղծս և կեղծս կեղծս, կերպարանս և կերպարանս կերպարանս, մանր և մանր մանր, ընդ որում կրկնավորների օրինակ-նախադասութիւնները երկրորդված են երամ, կեղծ, մանր բառահոգւածներում: Արդ, եթե առանձին բառահոգւածներով պիտի ներկայացվին այդ բառերը և նրանց կրկնավորները, ինչո՞ւ չի ներկայացված «Ամիս» բառի կրկնավորը: Մյուս կողմից, դիցուք, կերպարանգ-ի կողքին պետք էր ունենալ կերպարանս կերպարանս բառահոգւած ու առաջինիս պատկանող բառահոգւածում կրկնել երկրորդի օրինակները, բայց ինչո՞ւ բացակայում է այդ դեպքում կերպարանգ բառահոգւածում կերպարանս կերպարանս բառահոգւածի երկրորդ օրինակը՝ «Եւ ածեալ կերպարանս կերպարանս առաջի նկարէ» (178):

Թվական անունները Ժ. Թոսունյանը ներկայացնում է նաև իրենց բաղադրիչներով: Օրինակ. 29 թվականը ներկայացվում է և՛ քսան, և՛ ինն, և՛ քսան եւ ինն բառահոգւածներով: Նույն ձևով և 9000: Սակայն, ինչո՞ւ նույն սկզբունքով տարրալուծված չեն ներկայացվում «Հարիւր եւթանասուն հինգ հազար», «Հարիւր քսան» և այլ թվականներ:

Դ. Որևէ հեղինակի երկով, նրա լեզվով, ոճով ու առհասարակ ստեղծագործութեամբ հետաքրքրվողների համար մեծ նշանակութիւն ունի այն, թե տվյալ բառի հետ կապված ինչ համազոր անդամներ ու լրացումներ է վերցրել համաբարբառ կազմողը, այսինքն՝ թե բնագրից քաղված նախադասութեան անդամների ինչպիսի ընտրութիւն է կատարված: Եթե տվյալ բառը նախա-

դասովթյան մեջ հնթակա է, բնականաբար, համաբարբառ կազմելիս պիտի ընտրվեն նրա համազոր անդամները, լրացումները, ստորոգյալները, իսկ խնդիրներն ու պարագաները անտեսվեն՝ դրանք վերապահելով ստորոգյալի համար: Դրա փոխարեն, հատկացուցիչի դեպքում գուցե բավական լինեն միայն հատկացյալները: Մի խոսքով, ամեն մի բառ բառահոգովածում ներկայացնելիս հատուկ մոտեցում է պահանջում: Ժողովուրդը կատարել է այդպիսի ընտրություններ ու կրճատումներ, որից աշխատությունը դարձել է ավելի կոռ ու ամփոփ: Այդուհանդերձ, դեռևս շատ են անհարկի բառերը, անդամ նախադասությունները, որոնք ոչնչով չեն նպաստում տվյալ բառի իմաստը, ձևաբանական արժեքը կամ շարահյուսական առնչակցությունը բացահայտելուն: Բերենք բաղմաթիվ օրինակներից հրկուսը: «Աղերսալից բարբառով ասէր ցյանցուցեալն՝ Մ'ւր ես, Աղամ»: Եթե «Աղամ» բառի համար է բերված այս հատվածը, ապա բավական չէ՞ր միայն «Մ'ւր ես, Աղամ»: Իմաստի կամ քերականական առումով ոչինչ չի ավելացնում «Աղամ» բառին «Աղերսալից բարբառով ասէր ցյանցուցեալն» նախադասությունը: Պատճառ բառահոգովածում ունենք «Եթէ կաշող էր մերժել զչարն եւ ոչ մերժեաց, ինքն է պատճառ վնասուն» և «Եւ թէ գիտաց եւ ոչ եղծ զչարն, ինքն է պատճառ շարին»: Կարծում ենք, որ այս երկու նախադասություններում էլ առաջին հատվածները կարելի էր չնշել՝ առանց «Պատճառ» բառի իմաստը կամ քերականական կապը խաթարելու: Նկատի ունենանք, որ խելացի կրճատումների միջոցով քանի՜-քանի՜ էջեր կխնայվեին:

Դրա կողքին կան բառերի ու նախադասությունների ոչ նպատակային ու սխալ կրճատումներ: Եղնիկ Կողբացին ունի «Եւ տեսեալ, ասէ, աստուծոյն օրինաց որ տէր էր աշխարհի՝ թէ ազնուական է Աղամ եւ արժանի սպասաւորութեան» (244—245): Կրճատումներից հետո գրախոսվող աշխատության մեջ ստացվել է. «Տեսեալ... աստուծոյն օրինաց... թէ ազնուական է Աղամ»: Այս ձևով ու ծավալով սույն հատվածը զետեղված ենք տեսնում ազնուական, տեսանել բառահոգովածներում: Եթե «Տեսանել» բառի համար միանգամայն բավարար էր վերոհիշյալ հատվածը, ապա ճիշտ չէր նույնքան հատվածն օգտագործել «Ազնուական» բառի համար: Բանն այն է, որ նախադասության «Ազնուական» անգամը ունի նախադասության մի այլ՝ համազոր անգամ. «Ազնուական է Աղամ» եւ արժանի սպասաւորութեան»: Նույն ձևով ունենք «Եւ ոչ ինքն յանձնէ շար գտեալ եւ ոչ անաշար եւ ոչ հակառակ Աստուծոյ, այլ մտաւոր եղեալ Աստուծոյ եւ հմուտ գիտութեան»: Առկա է «Ձար», «Անարար», «Հակառակ» հատկանիշների բացասումը և «Մտաւոր», «Հմուտ» հատկանիշների վերագրումը մի որևէ անձի (սատանայի): Արդ ինչպե՞ս վարվել դիցուք անաբար կամ շար բառահոգովածում համապատասխան բառն ընդգրկող նախադասությունը բերելիս վերցնել միայն ա՞յդ բառը կամ պատահական կրճատումներ կատարել: Կարծում ենք, որ ընդգծված բոլոր բառերն էլ պետք է բերվեին, և ոչ թե կատարվեր պատահական կրճատում, ինչպես եղել է անաբար բառահոգովածում: Ահա այն. «Եւ ոչ անաբար եւ հակառակ Աստուծոյ, այլ մտաւոր եղեալ յԱստուծոյ» (51): Ինչպես տեսնում ենք, ոչ միայն կիսատ է միտքը, այլև չի հասկացվում, թե ում են վերագրված նախադասությունից պատահաբար պոկված այդ երեք հատվածները:

Անցուցանել բառահոգովածում կա «Ձամենայն ժամանակս կրօնաւորական կարգօք անցուցանէ ի սուգ», այնինչ որքան ճիշտ կլիներ, եթե բերվեր

նաև հաջորդ րառը՝ «անցուցանէ ի սուգ եւ ի տրտմութիւն»։ Սա էր ոչ միայն իմաստով ճիշտը, այլև գեղեցիկը։

Ե. Երբ որևէ բառ ունի իմաստի տարբերություն արտահայտող տարբերությամբ, համաբարբառ կազմողը պիտի գտնի այդ տարբերությամբ արտահայտելու հնարը, ինչպես արել են Կորյունի բնագրային, Մովսես Խորենացու քերականական համաբարբառները կազմողներ է. Դեմիրճյանն ու Օ. Խաչատրյանը (և հետագայում լույս տեսած բոլոր համաբարբառների հեղինակները)։ Ժ. Թոսունյանը նույնպես անտես չի արել ուղղումները, սրբագրությունները կամ տարբերությամբները և տվել, ասենք, «Անուն», «Անքանակ», «Աւտար», «Թերի», «Բակերպ», «Մանրանալ», «Կարիք», «Համակերտ», «Հեղմակապատ», «Պատճառ» բառերի ուղղումները կամ տարբերությամբները որոշ նախադասություններում «Անասուն», «Անքակ», «Աւար», «Թեր», «Ժակերպ», «Մանալ», «Կարծիք», «Համակերպ», «Հեղմակապաշտ», «Պատշաճ» ձևերով, սակայն դրանք համապատասխան տեղ չեն գտել ուղղված ձևերով բառահոգվածներում։ Թեկուզ և «Հեղմակապատ»-ը առաջարկվել է «Հեղմակապաշտ», բայց բացակայում է հեղմակապաշտ բառահոգված։ Այս դեպքում ուղղումները ինքնանպատակ չեն դառնում արդյոք։

«Ելլ լաղանդոց»-ի «Անդեղց ի հռաստանէ զգիշոյ անկանելոյ դիտաւորութեան» հատվածում «Անկանելոյ» բառն ունի «Ականելոյ» տարբերությամբ։ Մի կողմից թողնենք, թե տվյալ նախադասության մեջ ո՞ր բառն է նախընտրելի. այստեղ արդյոք Եղնիկ Կողբացին անգղի՝ զոհի վրա հեռվից ընկնելու դիտավորությունն է ընդգծել (ինչպես պնդում է պրոֆ. Ա. Ա. Աբրահամյանը)՝, թե՞ զոհին հեռվից նկատելու ընդունակությունը (ինչպես ընդունում են Եղնիկ Կողբացու բնագրի հրատարակությունների մեծ մասը և Նոր բառգիրք հայկազեան լեզուի» Ա հատորը)։ Նույնը վերաբերում է Անարար ինչ—Անարարիչ, Տնկեալ—Անկեալ տարբերությամբին։ Հետևաբար, ուղղումները կամ նշված տարբերությամբները կորչում են 842 էջանոց ստվարածավալ գործի պատահական մի բառահոգվածում («Տնկեալ» բառի «Անկեալ» ճշտված ձևը գտնում ենք անասուն բառահոգվածում (կամ մի այլ տեղ), բայց ոչ երբեք համապատասխան բառահոգվածում)։ Ժ. Թոսունյանը նկատի պիտի ունենար, որ «Ասորենայք» բառի ուղղված «Ստորենայք» ձևին ինքն իրավամբ առանձին բառահոգված է հասկացրել (սակայն այս անգամ էլ համապատասխան տեղում չի նշել բնագրում թեկուզ և սխալ գրված կամ տպված աստիճանային բառահոգված)։

Չէր կարելի անտես առնել նաև Լ. Մարիեսի՝ քննական բնագրի դեր կատարող փարիզյան հրատարակությունը, ինչպես նաև Գ. Տեր-Մկրտչյանի ու Հր. Աճառյանի «Թննութիւն և համեմատութիւն Եղնիկայ նորագիւտ ձեռագրին» դիրքը, որտեղ կան և՛ էական տարբերությամբներ, և՛ ուղղումներ։ 1826 թ. հրատարակության մեջ (հետևաբար և Համաբարբառում) կա «Զգոյր ժամանակ, յորում էր (հիւղն) անարար» (33), այնինչ Լ. Մարիեսի և 1914 թ. հրատարակություններում ունենք ճիշտ հակառակը՝ «Զգոյր ժամանակ, յորում չէր անարար» (էջ 20 և 24)։ 1826 թ. հրատարակության 308-րդ էջում կա բացահայտ սխալ. «Լուութիւն» բառի փոխարեն տպված է «Լրութիւն», որը և անցել

է Համաբարբառին, այնինչ և՛ նախադասութեան իմաստը, և՛ մյուս հրատարակութիւնները թելադրում են «Լուսին»։ 245-րդ էջի «Խորհեալ» բառը պետք է լինի «խորշեալ»³։

Ձ. Մեկ բառահոգովածի մեջ ընդգրկելով տվյալ բառն իր տարբեր իմաստներով, համաբարբառ կազմողը ուսումնասիրողին հնարավորութիւն է ընձեռում նկատելու (կամ չնկատելու) բառերի մենիմաստ կամ բազմիմաստ լինելը։ Այդպես էլ կազմված է գրախոսվող սույն աշխատութիւնը։ Սակայն ժ. Թոսունյանը Աստուած, Որդի, Տէր բառերը մեկական բառահոգովածներով ներկայացնելու փոխարեն բերել է Աստուած (քրիստոնեական) և Աստուած (Չաստուած), որդի (Չավակ) և որդի (Քրիստոս), տէր (Տէր) և Տէր (Աստված) անշատ բառահոգովածներով։ Այդ դեպքում սակայն ինչո՞ւ չներկատել հայր արտահայտած իմաստներին։ Եթե հետևենք հայր (Մնող) և հայր (Աստված) իմաստն ունեցող բառերին։ Նշենք նաև այն, թե որքա՞ն ճիշտ են բաժանված այդ բառերն ըստ իրենց արտահայտած իմաստներին։ Եթե հետևենք հայր (Մնող) բառահոգովածին, չե՞նք գտնի նաև այնտեղ «Աստված» կամ «Կրոնական գործիչ» իմաստն ունեցող «Հայր»-եր։

է. Դիտողութիւնների այս խումբը վերաբերում է քերականական առանձին երևույթներին։

Մի քանի բառերի խոսքի մասային պատկանելութիւնը ճիշտ չի որոշված։ է (գոյական) բառահոգովածում ընդգրկված է երեք նախադասութիւն, որտեղ իբր է-ն նշանակում է Գոյ, Աստված։ Ուշադիր ընթերցելու դեպքում, սակայն, կնկատենք, որ այդ երեք նախադասութիւններից առաջին երկուսում է-ն գոյականի իմաստ չունի, այլ՝ բայի և նշանակում է «կա», «Գոյութիւն ունի»։ Ահա այդ երկու նախադասութիւնները. «Ձի որ էն, պարտի, զի մշտնջենաւոր իցէ եւ անսկիզբն» (6), «Եւ որ էն եւ շարժէ զամենայն» (12)։ Հենց այդպես էլ թարգմանել է այդ հատվածները պրոֆ. Ա. Աբրահամյանը. «Որովհետև նա, որ կա» (31), «Եվ նա, որ գոյութիւն ունի և շարժում է» (34)։

«Ի լաւն խրատէ դարձուցանել» նախադասութեան մեջ «խրատէ»-ն ոչ թե գոյական է, ինչպես ընդունել է կազմողը, այլ բայ։ «Եւ ի զուր է կալ կալն ասել ումեք ի կալս եւ ոչ առ առ»-ում «Կալ կալ»-ը դիտվել է որպես «Կալ» գոյական, որի պատճառով Եզնիկ Կողբացու օգտագործած «Կալնուլ» բայն իսպառ բացակայել է Համաբարբառից։ «Վտանգին» բառը դիտված է տրական հոլովով դրված գոյական, այնինչ բայ է։ «Ճառելիք» բառը մտել է նաեւ, իսկ «Մնուցանելեալ»-ը՝ սնուցանել բառահոգովածների մեջ։

Նույն բառի եզակի և հոգնակի թվերը, որպես կանոն, բերված են մեկ ընդհանուր բառահոգովածի տակ։ Հետազոտողին է մնում որոշել, թե տարբեր թվերով դրված բառերը իմաստային տարբերութիւններ ունե՞ն, թե՞ ոչ։ Սակայն անհասկանալի է մնում կասկած-կասկածաւեմ, մաւրդ-մաւրդիկ, մեղմեղմ, յայն-յայնեմ, պատճառ-պատճառաւեմ բառերի եզակի ու հոգնակի թվերի առանձնացումը տարբեր բառահոգովածներում։ Իսկ ինչո՞ւ չառանձնացնել նաև կին-կանայք, պաշտօն-պաշտամունք բառահոգովածներ։ Չէ՞ որ բոլոր դեպքերում բառերի եզակի ու հոգնակի ձևերը ունեն նույն արմատն ու իմաստները։ Առավել արտառոց է մեմ բառահոգովածի բացակայութիւնը (կազմողը այն մուծել է եւ-ի մեջ)։ Եթե «Գոյ» բառի եզակի և հոգնակի թվերն արտահայտ-

3 Նույն տեղում, էջ 243, ծան. 438։

վում են նույն արմատի զրո և Բ վերջավորություններով, ապա «Ես»-ի հոգնակին նույն արմատը չունի, այլ արտահայտվում է բառային մեկ այլ՝ նոր միավորով՝ մեք-ով:

Ճիշտ չէ Եղեղացու երկու մեկ անգամ (այն էլ հոգնակի թվով) վկայված բառը հոգնակի ձևով էլ ներկայացնելը: «Արի» բառը որպես բառահոգնակ բերված է աբի, «Եպիկուրեայ»-ը՝ եպիկուրեանք, «Հայ»-ը՝ հայք, «Մկան»-ը՝ մկանուք, «Պիթագորեան»-ը՝ պիթագորեանք, «Պլատոնեան»-ը՝ պլատոնեանք, «Մենտի»-ն՝ մենտիք ձևերով:

Չկա հետևողականություն անցյալ և ենթակայական դերբայներով արտահայտված բառերը առանձին կամ տվյալ բառի անորոշ դերբայի բառահոգնակով ներկայացնելու գործում: «Գործող», «Գտող», «Հաւանող», «Մոլորեալ», «Ուսեալ», «Ուրացեալ» ձևերը մտել են համապատասխանաբար գործել, գտանել, հաւանել, մոլորել, ուսանել, ուրանալ բառահոգնակների մեջ, այնինչ կան կատարեալ, առաքեալ, կարող, հեծեալ, մեռեալ առանձին բառահոգնակներ:

Նիւ-ալի ածականական վերջավորություն ունեցող բառերի մի մասը մտել է բառերի բայական ձևերի մեջ, իսկ մյուս մասը հանդես է եկել առանձին բառահոգնակով: «Բաժանելի», «Գործելի», «Մատուցանելի», «Պատժելի» բառերը գտնում ենք բաժանել, գործել, մատուցանել, պատժել բառահոգնակներում, մինչդեռ առանձին բառահոգնակներով են ներկայացված «Գովելի», «Եղծանելի», «Երանելի», «Երեւելի», «Ըմբռնելի», «Ընդունելի» բառերը:

Նույն ձևով մեկական անգամ պատահած «Ժմերտեալ»-ը դրվել է ժմերտեալ-ի, իսկ «Լկտեցեալ»-ը՝ լկտեցեալ-ի տակ:

Ժ. Բոստանյանը գրաբարի ել-իլ լծորդությունները վերածել է ընդհանուր ել-ի: Կարողում ենք երեւել, կարօտել, կրօնաւորել, մոլորել, սնանել, այնինչ պիտի լինել երեւիլ, կարօտիլ, կրօնաւորիլ, մոլորիլ, սնանիլ: Երբեմն էլ ձուլված են բայի ներգործական և կրավորական սեռերը: Օրինակ. Անուանել-Անուանիլ, Զրնել-Զրկիլ, Մկրտել-Մկրտիլ, Յաղթել-Յաղթիլ, Պաշտել-Պաշտիլ բայերի սեռային ձևերը ներկայացված են միասին՝ մեկ բառահոգնակով մեջ: Ճիշտ կլինի դրանց առանձին բառահոգնակներ հատկացնելը:

Ը. Ընդհանուր բնույթի դիտողություններ.

1. Եղեղացու երկի առանձին գրքերի խորագրերում նշված բառերը չեն ընդգրկված Համաբարբառի մեջ: Օրինակ. «Աղանդ», «Գիրք», «Եղծ»: Եթե բերված է Եղեղացու բառը, որը նույնպես խորագրի մաս է կազմում, ի՞նչ հիմք կա զանց առնելու «Կողբացի»-ն:

2. Աշխատությունն անպատճառ պիտի ունենար մի առաջաբան, որտեղ պետք է շարադրվեին Համաբարբառը կազմելու գոնե հիմնական մի քանի սկզբունքները:

3. Խիստ ցանկալի էր, որ ամեն մի բառահոգնակով նախադասություններն ունենային իրենց հերթական համարները՝ անհրաժեշտության դեպքում ոչ թե ամբողջ նախադասությունը, այլ այդ նախադասության պայմանական համարը նշելու համար: Դրանից բացի, դա անհրաժեշտ է բառերի վիճակագրության ու հաճախականության հաշվառման համար:

4. Նշվել է միայն վկայություն—նախադասությունների էջահամարը: Օգտակար կլինի նաև նշել, թե տվյալ էջի որ տողում է գտնվում այդ բառը:

5. Եթե նախադասության մեջ նույն բառը կրկնվում է երկու և ավելի անգամ, ապա այդ նախադասությունը նույնքան անգամ էլ պետք է կրկնվի:

6. Գրությունների հեղինակի ձև ունեցող բառերը պետք է համախմբվեն մեկ բառահոգովածի տակ՝ ծայրահեղ դեպքում կարելի էր սխալ կամ քիչ օգտագործվող ձևերը հղել մյուսին: Առանձին բառահոգովածներ են կազմվել, օրինակ, Աղեֆսանյուր-Աղեֆսանդրոս, անգ է-անկ է, անձնիր-անցնիր, գելդ-գիլդ, եթուպացի-եթովպացի, երկեղ-երկիլդ, երկեղած-երկիղած, երէ-էրէ, բիւն-բոյն, կտրող-կարող, Սերուֆ-Սէրուֆ, անսող-անսող, ցանկացող-ցանկացող: Այն տպավորությունն է ստացվում, որ արտաքին ձևն իմաստից ավելի կարևոր է: Բացի այդ, դա դուռ է բաց անում բառերի ոչ ճիշտ վիճակագրության:

Թ. Մի շարք տեխնիկական կարգի թերություններ.

1. Եթե փնտրելու լինենք Եզնիկ Կողբացու օգտագործած «Ամուս» և «Երեքկին» բառերը, ապա չենք գտնի, քանի որ առաջին բառն ընդգրկող նախադասությունը մտել է ամիս, իսկ երկրորդ բառը՝ երեքեան բառահոգովածների մեջ:

2. Կան ընդգծված բառեր ախորժել, այսօր, անսարգ, անմահութիւն, անմեղ, անաստութիւն, երակ, ընկեր, թերակատար, թշնամի, ծառայ, ճնար, ճպարտանալ, ճրաման, մանր, Մելփիսեղեկ, մեծատուն բառահոգովածներում, իսկ արեւել, ճանգչել, պարտ է բառահոգովածներում ընդգծված են բոլորովին այլ բառեր: Անգամ (գոյական) բառահոգովածում ընդգծված են մի դեպքում «Բազում անգամ», «Երկրորդ անգամ», «Մի անգամ», «Միւս անգամ» հատվածները, իսկ մյուս դեպքում միայն «Անգամ» բառը:

3. Կան այբբենական կարգով չդասավորված բառահոգովածներ: Խռի-գրված է խոցել բառից հետո և խուժական, խուճկ, խուճն, խուճափել բառերից առաջ (այսինքն՝ բառահոգովածների դասավորումը կատարված է ըստ հայերենի այբուբենի ժամանակակից համակարգի), այնինչ պետք է գրվեր խուճափել-ից հետո: Սխալ են տեղադրվել նաև մայր, մերձ, յոժարեցուցանել, ինչպես նաև փու սկզբնատառերով սկսվող բառերը:

4. Բառահոգովածի մեջ երբեմն նախադասությունները սխալ են տեղավորվել: Ագդել բառահոգովածում շորորորդ նախադասությունը պետք է լիներ ըստ հերթականության երկրորդը, իսկ ախոյեան բառահոգովածում առաջին նախադասությունը պետք է տեղ գրավեր բառահոգովածի վերջում:

5. Ժիշտ է, առանձին բառահոգովածներով են ներկայացված չ ժխտական մասնիկն ունեցող գոյականներն ու ածականները (գոյ-չգոյ, կենդանի-չկենդանի), բայց «Զուկնդիր»-ը մնացել է ունկնդիր և շուկնդիր լինել բառահոգովածներում:

6. Աշխատության մեջ կան սպրդած սխալներ (Անհեղեղծութիւն. էջ 47, Անհաճ՝ փոխանակ Անհաճ. էջ 44, Մերովպս՝ փոխանակ Մերովպ, էջ 564), հատուկ անունը մեծատառով չգրելու դեպքեր: Այսպես. Յովհաննէս և Մկրտիչ բառերի զուգորդության մեջ վերջինս նույնպես հատուկ անվան արժեք ունի, ինչպես Եզնիկ Կողբացի, Մխիթար Գոշ դեպքերում երկրորդ բաղադրիչները, հետևապես այս դեպքում էլ «Մկրտիչ» բառը մեծատառով պիտի գրել:

Կարծում ենք, որ եթե չլինեն այսպիսի թերություններ, համաբարբառները մեծապես կշահեն, ուստի և առաջիկա հատորների կազմողները պետք է հաշվի առնեն դրանք: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ համաբարբառները աստիճանաբար, աննկատ, բայց տիրապես մտնելու են հայագետների գիտական կենցաղի մեջ:

КОНКОРДАНС ЕЗНИКА КОХБАЦИ

АНДРАНИК ЗЕЙТУНЯН

Резюме

В конкорданс включены не только материальные части речи, но и все слова без исключения. При этом предлоги даны с употреблением в разных падежах, что придает конкордансу характер грамматического конкорданса. В работе имеются отдельные ошибки и пропуски: отсутствуют весьма важных семь слов, употребление некоторых слов указано не полностью, в некоторых примерах неправильно сокращены члены предложений, ошибочно определена принадлежность частей речи. Существуют также ошибки общего и технического порядка.